

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրելի գրվում են ուղղակի
Тифлис. Редакция „Мусака“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ա մեն և ե գ ու ղ

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը: — Ներքին տեսչութիւնը: Նամակ երեսնից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: — Արտաքին տեսչութիւնը: Թիւրքիա: Կողմնակալի ապստամբութիւնը: Արտաքին լուրեր: — «Մշակի» հեռագիրներ: — Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց: Բանասիրական: Ապանական առասպել:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Սոցիալիստների դէմ ուղղած օրէնքը քննող մասնաժողովը վերջացրեց իր աշխատանքները: Նա ընդունեց նախագիծը մի քանի փոփոխութեամբ և այժմ օրէնքը երկրորդ անգամ կարգացվում է գերմանական պարլամենտում: Լրագիրները կարծիք են յայտնում, որ պարլամենտը կընդունէ օրէնքը միայն մի քանի աննշան փոփոխութեամբ, մանաւանդ այն դէպքում եթէ կղերական կուսակցութիւնը կը քուէարկէ յօգուտ կառավարութեան: Փրանկ-պրուսական պատերազմից յետոյ գերմանական կառավարութիւնը սաստիկ հաւածում էր կղերականներին, նրանց դէմ ուղղած օրէնքներ հրատարակեց, սոցիալիստների վերաբերութեամբ նա այժմ նոյնպէս է վարվում: Գերմանիան պապին մի քանի զեջողութիւններ է արել նրա կուսակիցների ձայները ստանալու համար:

Երբեքում լրագիրների մէջ տպվեց պապի նամակը, որ նա

գրել էր գերմանական նուիրակին: Եւրոպայի աղմուկը զգեց ամբողջ Իտալիայի մէջ: Իտալական լրագիրները այն միտք են յայտնում, որ պապը, հաշտելով Գերմանիայի հետ, թշնամանում է Իտալիայի և նրա հիմնարկութիւնների հետ: Պապը իր նամակի մէջ ցաւում է, որ կորցրել է իր աշխարհական իշխանութիւնը, ստիպված է համբերել, որ Հռոմում հերետիկոսների եկեղեցիներ և ուսումնարաններ հիմնվեն և որ չէ կարող առանց կառավարութեան թոյլատուութեան կարգի նախնի և եպիսկոպոսներ նշանակել: Իտալական պաշտօնական լրագիրները այդ նամակից եզրակացնում են, որ պապը ձգտում է ոչնչացնել Իտալիայի միութիւնը և այգպիսով վերականգնել իր աշխարհական իշխանութիւնը:

Երբ բարձրացաւ Աֆգանիստանի հարցը, էմիրի յանդուգն վարմունքից յետոյ անգլիական զեսպանութեան հետ, լրագիրները կարծում էին, որ Անգլիան շուտով Աֆգանիստանին պատերազմ կը յայտնէ: Պատերազմը, որ պէտք է հոկտեմբերին սկսվէր, Հնդկաստանի կառավարութիւնը յետաձգել է մինչև նոյեմբեր, որովհետեւ եթէ այդպէս շուտ սկսվէր՝ գուցէ անգլիացիների յաղթութիւնը ապահոված չը լինէր: Անգլիայում գտնվեցան և այն-

պիսի մարդիկ, որոնք խորհուրդ չեն տալիս Աֆգանիստանի հետ պատերազմ սկսել: Այդպիսինքն մէկն էլ լորդ Լաուրենսն է, Հնդկաստանի նախկին փոխարքան, որին գործերի զրուծիւնը պէտք է լաւ ծանօթ լինի: Դրա նամակը, որ տպված էր անգլիական «Times» լրագրի մէջ, յայտնի է մեր ընթերցողներին: Բացի այն հանգամանքը, որ Հնդկաստանի զորքերին դժուար կը լինի պատերազմել անմատչելի սարերում պաշտպանված աֆգանիստանցիների հետ, լորդ Լաուրենս մատնացոյց է անում նոյնպէս Հնդկաստանի ֆինանսական վատ դրութեան վրա:

Այդ հարցը այժմ զբաղեցնում է անգլիական կառավարչական շրջանները:

Հնդկաստանի ֆինանսները վատ են, ուրեմն Անգլիան պէտք է վաճառէ պատերազմական ծախսերը:

Աստիական զորքերը վերջապէս զրաւեցին Բոսնիա և Հերցեգովինա նահանգները և ապստամբներին գրեթէ զինաթափ արին: Այդ երկիրների մէջ պէտք է վարչութիւններ կազմակերպել և կառավարութեանը փող է հարկաւոր: Ծախսերի մի բաժինը պէտք է Ունգարիան վճարէր: Այդ հարցը պատճառ եղաւ, որ ունգարական միսիստութիւնը հրաժարական տուեց, ի նկատի ու-

նենալով, որ Ունգարիայի ֆինանսական դրութիւնը այնքան վատ է, որ նա չէր կարող վճարել պահանջած բաժինը: Չը նայելով, որ կայսր Ֆրանց-Յոսէֆ չէր ընդունում ունգարական միսիստների հրաժարականը, նորա պնդեցին և թողին իրանց պաշտօնները: Աստրո-Ունգարիայում անբաւականութիւնը Ռուսաստանի դէմ հետզհետէ սաստկանում է:

Փրանսիական լրագիրները զբաղված են Գամբետայի ապաքաղաքական ճառով, որի մասին մեր Փարիզի թղթակիցը տեղեկութիւն տուեց: Կղերականներին բարկացրել է ճառի այն մասը, որտեղ Գամբետա ասել է թէ պէտք է կրթութեան գործը խել հոգեւորականների ձեռքից: Առհասարակ այդ ճառը մեծ աղմուկ գործեց: Սենատի և ազգային ժողովի լրացուցիչ ընտրութիւնների օրը արդէն նշանակած է:

Թիւրքաց կառավարութեան վերջին ջրաբերականը, որի մասին հաղորդեց հեռագիրը, մինչ այն աստիճան վատ տպաւորութիւն է գործել Եւրոպայում, որ Անգլիան և Աստրո-Ունգարիան յայտնեցին թիւրքիային, որ շրջաբերականը վերաւորող է եւրոպական բոլոր պետութիւնների համար: Արջաբերականը ամբողջապէս դեռ տպված չէ, բայց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՊԱՆԻԱԿԱՆ ԱՌԱՍՊԵՂ

(Մօնսերրա)

Միջերկրական ծովի մօտ, Բարցելոնա քաղաքից 30 վերստ հեռու, այսպէս անուանված թագաւորական ճանապարհի մօտ, բարձր ծառատունիների մէջ գտնվում է Մօնսերրա լեռը, որ յայտնի է Ապանիայում իր կրօնական յիշատակներով: Գեղատեսիլ անհամար պատերազմների բոլոր կատաղի ալիքները փչրվում էին այս լեռան ստորոտում և նրա բնակիչների անդորր կենքը ոչինչով չէր խանգարվում: Գեռայժմ, այդ լեռան վրա չինված վանքում պաշտվում է Աստուածամօր պատկերը: Հնապարհորդը դեռ հեռուից տեսնում է մէկը միւսի վրայից բարձրացող զազաթները և այս լեռնային տեղը կազմում է ամբողջ կատալոնիայի գլխաւոր նշանաւորութիւնը:

Բարձր լեռների զազաթները, որոնք ձգված են հակապահան ժայռերի կոյտերի վրա, միջնադարեան շինութիւնների են նմանում: Լեռների զառ ի վայրերում երևում է, թէ և սակաւ, գեղեցիկ բուսականութիւն: Իր դժնեայ գեղեցիկութեամբ Մօնսերրան բարձրանում է ծովի մակերևոյթից 3280 ոտնաչափ: Բրգան զազաթների թաղերով ծածկված, նա ունի մի անսովոր և զմայլեցուցիչ տեսք: Նոյն ինքն տեղի անունը Մօնսերրա (սղոցով կտրված լեռու) բացատրում է նրա օտարտի ձևը: Մէկը միւսի վրա բարձրացած զազաթները երբեմն բաժանվում են հեղեղներով և խոր քարանձաւներ են կազմում: Նրանցից ամենանշանաւորը, Մանտա-Մարիա (սուրբ Մարիամ) կոչուածը, բաժանում է այս գիւղը երկու զանազան մասերի: Երկու հարկերից աւելի բոյսերի ու ծառերի տեսակները զարդարում են վտակների ափերը և իրանց խիտ կանաչով մեղմացնում են վայրերի դրուժեան դաժան տեսքը: Լայնատարած այրերի մէջ բնութիւնը տարերի ընթացքում չինել է իր աներկիւղ ու վարժ ճարտարապետութեամբ գեղեցիկ կամարներ: Այս այրերի մուտքերը կարծես թէ զարդարված են անհամար ու բազմատեսակ բնական բոյսերով: Հնապարհորդները անտարբեր չեն անցնում այս կրօնական

յիշատակներով օրհնված վայրերի մօտով: Բոլոր այս բրգան զազաթները բաղկացած են լեռնազան գոյների կրակաւոն ժայռերից: Բոլոր այս լեռնային գիւղերում 33 վերստի չափ տարածութիւն ունեցող չըջանում տիրապետում է կրաքար և միայն մասնաւորապէս աւազաքար սպիտակ որձաքարի հետ: Այդ լեռան վրա բարձրանալը այնպէս դժուար չէ, ինչպէս Ալպեան կամ Պիրինեան սարերի զազաթների վրա: Չը նայելով վայրերի բնութեամբ չըջապատված լայն տեղի տաժանութեանը, քրիստոնեաների կրօնական ջերմեանդութիւնը ընտրել է նրան վայր սուրբ օթեանի համար: Եւ ներկայ ժամանակում պահպանվում է այնտեղ սուրբ Բենուի հետեւալ կանոնը «ապրել կամ մեռնել, չը թողնելով մեղքերը քաւելու և ապաշխարութեան նուիրած այս տեղը»: Ով կարող է նկարագրել սուրբ հայրերի զրկանքը և ծանր ապաշխարութիւնը որոնք կատարվել են միայն Աստուծո ներկայութեամբ և բոլոր այն զոհերը որոնք ընծայաբերել են նրանք հոգու փրկութեան համար: Մօնսերրա լեռան տաս և երկու զազաթներով մէջ փորած խրեցերի մէջ միշտ ձգնաւորներ են ապրել: Մտաբերելով դրանց կրած զրկանքները, ախմայ զարմանում ես կրօնի զօրութեան վրա:

Մօնսերրայի վրա կառուցված է Աստուածա-

մօր վանքը, որին պատկանում են բոլոր խցերը: Վանքը երկու հիւանդանոցներ ունի, մէկը վանքում ապրողների համար, իսկ միւսը դրսից եկողների համար: Հարուստ և աղքատ անդադար այցելում են վանքը և այնտեղ հաւասար հիւրընկալվում են: Աւստաւորը երբ օր ձրիապէս կերակրվում է վանքի մէջ:

Գժուար է երևալայել բոլոր եղբայրական հոգացողութիւնը որով չըջապատում են Մօնսերրա եկողներին: Այնտեղից հրաժարված միանձնների համար վանք այցելողները հաւասար են, որովհետեւ նրանց օգնութեան միութարութեան կաթոն եղբայրներ են համարում: Աւանդութիւնը ասում է, որ այստեղ առաջ կոչվում էր լեռան Նստօրէն: Թէ և այսպիսի անուն չէ գտնվում սպանիական հին ձեռագրներում: Չը նայելով հին հեղինակների այսպիսի լուծութեանը, բոլոր միջնադարեան աշխարհագետները անուանում են նրան «Mons Serratus» կամ «Mons Obserratus» այսինքն սղոցի կամ սղոցված լեռու: Վանքի շինութեան մասին պատմում են հետեւալ աւանսպելը:

Այն ժամանակ երբ քաջ Վիլիբրի տիրեց Բարցելոնայի կոմսութիւնը, այդ կոմսութեան

ինչպէս երևում է հեռադրական տեղեկութիւններէ, նա ուղղած է կոնգրեսի վճիռներէ դէմ:

Անկարգութիւնները թիրքիս-յում շարունակվում են կատար-վել: Եւրոպական մասնաժողով-ները հաւաքված են Կ. Պոլսում, բայց չեն կարողանում ուղեորվել իրանց տեղերը աշխատանքներ սկսելու համար, որովհետեւ ապա-տամբներից իրանց ապահով չեն համարում, մասնաւոր այն մաս-նաժողովը, որ պէտք է գծագրէ Սերբիայի և Չէրնոգորիայի սահ-մանները, որտեղ կատարելապէս տիրապետում է «Ալբանեան ընկե-րութիւնը»:

Անկարգութիւնները Հայաս-տանի մէջ վերջ չունեն: Լրա-գիրները հայ գաղթականներէ թիւը հասցնում են 200,000, բայց մեր տեղեկութիւնների հա-մեմատ գաղթող հայերի թիւը եօթ հազարի է հասնում: Ռուսաց զորքերի թիրքիայից հեռանալուց յետոյ միայն հայերի դրութիւնը չէ վատացել. յոյները և սլավոնա-ները նոյն վիճակի են եւթարկված:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

1 հոկտեմբերի

Սեպտեմբեր ամսի 24-ին Երևանի թատրոնա-կան խումբը ներկայացրեց նոր դանդաղում «Սև հողեր» անունով ողբերգութիւնը. մի գրուածք, որ մենք առաջին անգամ ենք տեսնում թատ-րոնական բեմի վրա: Որպէս մի նոր բեմական աշխատութիւն, երկու խօսք ասենք նրա բովան-դակութեան մասին: Լակիթմուր Հայաստանի վրա արշաւում է. մի հայ զորական վաշէ անունով դաւաճանութիւն է գործում, թողնելով իր աղբը թշնամու հետ է միանում: Նախախնամութիւնը պատժում է այդ ապիւրիստին: Բացվում է դը-ժոխը, լսվում է ամպի որոտ, խիւղում է կայ-ծակ, դուրս են թռչնում անկիւններից սա-

լեւներում բնակվում էր Յովհաննէս Գարին (Juan Garin) անունով ճգնաւորը, որը այն չըր-ջակայքում համարվում էր մի մեծ սքանչելա-գործ: Դեռ այժմ վանքի մօտ ցոյց են տալի մի քարանձաւ, ուր պատասպանվում էր աշխարհիս ունայնութենից հեռացած հոգեւորականները: Նրա կենքի բարեպաշտութիւնը և սրբ-բութիւնը զարթոնքի դէպի ինքն սաստիկ առե-լութիւն մարդկութեան ոխերիմ թշնամու (դեմ) մէջ, որը նախանձելով միայնակացի բարեգոր-ծութիւնների վրա վճռեց նրան մեղադրել տալ: Բայց երբ նրա բոլոր խորամանկ փորձերը զուր եղան, այն ժամանակ թշնամին ճգնաւորի կեր-պով, բնակվելով միայնակացի մօտ մի քարան-ձաւի մէջ, եկաւ. նրա մօտ իբր թէ պատահմամբ և խորամանկ զարմացմամբ յայտնեց, որ բնակ-վելով մի քանի տարի այս անապատում, երբեք նրան չէ պատահել: Միայնակացի բարեկամա-բար ընդունեց խաբէրային և խոտապաւ. բնակ-վել նրա հետ եղբայրական միաբանութեամբ: Դուրս գնալով կեղծ ճգնաւորը ցանկութիւն յայտնեց յաճախակի այցելել ճգնաւորին, նրա խորհուրդներով և հոգեւ փրկութեան հմտութեամբ ոգեւորվելու: Բայց որպէս զի աւելի ճշդօրէն կա-տարի իր դաւաճան մտադրութիւնը, նա կան-չեց իրան օգնութիւն մի ուրիշ դեմ, որը նրա

տանայքը, բռնում են վաշէին և դժոխքը գցում: Առաջին տեսարանը ներկայացնում է մի կայ-րիկների վերադարձը իր ամուսնու մօտ: Երկար ժամանակվայ բացակայութենից յետոյ, այդ եր-կուսի երկար ու ձիգ խօսակցութիւնը մի ամբողջ ժամ է տևում: Առհասարակ գրուածքի մէջ ոչինչ կապ չը կար. մի անցք, որ կատարվելու էր մի քանի տարուց յետոյ մի և նոյն տեսարանի մէջ: Եր վերջանում: Վերջապէս ով որ փոքր ի շատէ ծանօթութիւն ունի մեր բեմական գրուածքների հետ, կարող է իմանալ, որ «Սև հողերը» այն աշխատութիւններից միւն է, որի մէջ յաճախակի կրկնվում է՝ «Սև Հայաստան, քանի որ անհայտնութիւն բառերը: Զանգառութեան չէ տուած և այն դե-րասանը, որը սկսում է կամաց կամաց ցնորվել, քրքրել իրան, և կուէլ բեմի յատակի վրա իր աչքին երևող ուրուականների հետ: Վերջին արարվածը խաղաղին «Պառաւնեքին խրատ», հանք. Մ. Տէր-Գրիգորեանի վոզովիլը: Այդ գըր-վածքը ձեռ յայտնի է և այստեղ աւելի լա-տպաւորութիւն գործեց, քան թէ առաջին պիե-սայի հաւաչանքները: Աւելորդ եմ համարում խաղաղոյնների միջև մի քանի անգամ եւն-թարկել. բացառութեամբ մի քանիսի, գրեթէ բոլորը վատ էին: Մի ընդհանուր պակասութիւն որին ենթակա են մեր պ. պ. գերասանները, այդ այն է, որ ոչ ոք չէ պատրաստում իր գերը կան-գնում են բեմի վրա ելնելու չը գիտեալով, աւա-մայից շարադրում են իրանցից խօսքեր, և գրանով աղաւաղում են հեղինակի աշխատութիւնը: Խաղին մասնակցում էին մի քանի օրիորդներ: Օրիորդ Փ. Մեղեանը, չը նայելով որ առաջին անգամ էր ոտք դնում բեմի վրա, այնուամենայնիւ շատ հրաշալի կատարեց իր դերը: Հասարակութիւնը մի քանի անգամ ծանրանալով դուրս կանչեց նրան բեմի վրա: Եթէ օրիորդը-մշակի իր գերա-տանական քանքարը, ևս գուշակում եմ, որ ապա-գայում մեր՝ բեմը կունենայ մի լաւ գերասա-նուհի: Վերջացնելով նախկին խորհուրդը եմ տալիս մեր գերասանական խմբին մի կողմ թողնել ողբերգական գրուածքները և աշխատել որքան կարելի է նրանցից ժողովրդի կենքից վերցնել:

Ա. Եր.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 26 սեպտեմբերի

Շուշու ուսանող երիտասարդութիւնը այս ա-մառվան արձակուրդների ժամանակ ցանկա-ցաւ մի քանի անգամ գրականական երկերներ տալ: Այդ ձեռնարկութիւնը, իբրեւ բոլորովին նոր բան Շուշու մէջ, անշուշտ խոչընդոտների պիտի հանդիպէր, բայց խոչընդոտները կարելի է յաղթել, եթէ միայն աշխատութիւն լինի, ուստի և շատ գիտաւորութիւններից յետոյ, կարելի ե-ղաւ երեկոյն տալ: Առաջին երեկոյն տրվում էր ի պատիւ մեր երանելի թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ, որոց անունը և յիշատակը բոլո-րովին մոռացութեան է տուած ամբողջ Ար-ցախում: Թեմի հայերի կողմից: Այդ օր տեղա-կան փոխանորդի հրամանով բոլոր եկեղեցիները պէտք է տօն կատարէին, բայց շուշեցիները

հրամանով Բարեկրօնայի կառավարչի աղջկան կատարեցին: Եր: Աղջկայ հիւանդութիւնը սաստ-կանում էր և նա գլխի հրամանով անդադար կրկ-նում էր, որ իրան կարող է վերել Մոսկերա լեռան վրա բնակվող Յովհաննէս Գարին ճգնա-ւորը: Կոմս Վիլիլիզը պատուիրեց լեռներում որոնել Գարինին և իմանալով թէ որտեղ է լի-նում ճգնաւորի այրը, գնաց հիւանդ աղջկայ հետ իր ծառաների առաջնորդութեամբ: Գնալով միայնակացի մօտ կոմսը պատմեց նրան իր աղ-ջկայ տանջանքները աւելացնելով, որ միայն ճգնաւորի աղօթքները կարող են աղջկան փրկել: Խոր փոստայով կոմսի աղջկան պատահած անբաղդութեան վրա, ճգնաւորը ծունկ չըթած, արտասուք թափելով, խնդրեց Ամենակարողից փրկել դուռնար աղջկան: Նրա ճգնաւորը վերջաց-րեց աղօթքը, շուտով հեռացաւ, իսկ աղջիկը իրան առողջ դրաց: Այս հրաշքը սաստիկ զար-մացեց կոմսին և նրա ուղեկիցներին: Շնորհա-կալութիւն թափելով աղջկայ բժշկվելու համար, կոմսը յայտնեց Յովհաննէս Գարինին, որ չար որին սպառնում էր կրկին տանջել աղջկան, եթէ օրիորդը չի մնայ քարանձաւում: Գարինի մօտ ինն օր նրա հետ աղօթելու և ապաշ-խարհելու համար, և խնդրում էր թող տալ աղջկանը մնալ այդքան միջոց քարանձաւում:

այդ բանը նորաձեւութիւն համարելով սկսեցին տրտնջալ և բողբոջել, որով և գրականական երե-կոն այցելողների թիւը բաւականին աննշան էր, այնպէս որ հազիւ 28 բուլը հաւաքվեց և ծախար դուրս գալուց յետ մնաց միայն 2 բուլը: Այս երեկոյն մէջ կարգացվեցաւ մեր թարգմա-նիչների կենսագրութիւնը, և մի երկար յօդուած մեր ներկայ պարբերական հրատարակութիւն-ների վրա, որոնք բաւականին համակրութիւն գրականին: Գրականական երեկոյի երկրորդ օրը շատերը խնդրում էին կրկնել գրականական երե-կոն: Ժողովրդի այս խնդրքը ընդունվեցաւ և օգոստոսի 5-ին երկրորդ անգամ տրվեցաւ գրա-կանական երեկոյ յօդուած տեղական օրիորդաց զպրոցին: Այս անգամ կարգացված յօդուած-ների մէջ նշանաւորները սրանք էին 1) Խրի-մեան հայրիկ, նրա կենսագրութիւնը և գրուածք «Վանգոյթ, Հայգոյթ, Ժամանակ և խորհուրդ իւր», 2) Հայոց խնդրքը կոնգրեսում, 3) Մեր հոգե-րականները: Պէտք է ասել, որ բաւականին յա-ճող անցաւ, ըստ որում այս անգամ ծախքը դուրս գալուց յետ մօտ 15 ր. մնաց: Միայն ցաւալին այն էր, որ թէ և երեկոյն յօդուած օրի-որդական դրոշի էր, բայց հոգաբարձուներից ոչ միւն չը բարեհաճեց մի բուլը կամ մի 50 կօպէկ գոնել և գալ, որով և բաւական վատ տը-պաւորութիւն գործեց ժողովրդի վրա:

Խմ ընկերների կողմից յանձնված լինելով ինձ այս թիթև հայելը ներկայացնել հասարակու-թեան, խնարհաբար խնդրում եմ զետեղել երկ-տողը ձեր լրագրի մէջ:

Հ. Առաքելեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք 3 բուլը յօդուած «Արարատեան ընկերութեան» պ. Տիգրան Տէր-Յարութիւնեա-նից:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են «Սեպտեմբերի 24-ի ներկայացման արդիւնքը եղաւ 246 բուլը: Բոլոր տոմատները վաճառվեցին: Դատերը տոմսակ չը լինելու պատճառով ներկայացմանը չը կա-րողացան գտնվել: Այդպիսի բաղմութիւնը Երե-ւանում հայ ներկայացման ժամանակ առաջին անգամն ենք տեսնում»:

Մեզ հաղորդում են ԵՐԵՒԱՆԻՑ. «Հոկտեմբերի 8-ին թատրոնական խումբը ներկայացնելու է Շուշանիկ ողբերգութիւնը, մի պիեսա որ այս-տեղ շատ անգամ է խաղացվել: Մեր թատրո-նականները չեն կամենում ձեռք վերցնել ողբեր-գութիւններից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՒՆ

«ГОЛОСЪ» լրագրի թղթակցը Կ. Պոլսից գրում է հետևեալը:

«Բ. Դուռը համագամներից ստիպված

ձգնաւորը սաստիկ զարմացաւ, երբ լսեց այսպիսի մի խնդիր: Նա աղաչում էր կոմսին չը պնդել այդ մասին, առաջ ընելով տեղի անապատութիւնը, իր այրի փոքրութիւնը, այդքան միջոց կոմսի աղջկայ ուղեկիցների հետ այդտեղ մնալու ան-կարելիութիւնը և չէր ծածկում նրանից նոյն իսկ իր երկիւղը ինն օր անցնել նրա աղջկայ հետ, որի գեղեցկութիւնը զմայլեցնում էր անգամ իրան ճգնաւորին: Բայց կոմսը կամակոր էր. նա անդադար պնդում էր իր պահանջի վրա, ցանկա-նայով միայն աղջկան թողնել այրում: Այս ան-գամ կոմսը երեաց այնպէս զայրացած, որ ճըզ-նաւորը վճռեց այլ ևս չընդգրկուի Վիլիլիզ կոմսը հեռացաւ իր ուղեկիցներով Մոսկերայից 4 վերստ հեռաւորութեամբ գտնվող գիւղը, թող-նելով իր աղջկին ճգնաւորի մօտ, որն պարտական էր գեղեցիկ օրիորդի հետ աղօթել:

Կեր հասել էր նպատակին: Ոգուտ քաղելով ճգնաւորի համաձայնութեանց ապրել ինն օր կոմսի քնքոյշ աղջկայ հետ, այս վերջինի օգնու-թեամբ կամեցաւ ճգնաւորի բարոյականութիւնը խախտել: Դուռով սուրբ հայրը առանձին ջեր-մութիւն զգաց իր երակների մէջ: Նրա մտածո-ղութեան առարկան աղջկին էր, Եփթը և ան-հանգստութիւնը տիրել էր Յովհաննէսին: Ամեն անգամ, երբ նա աղօթում էր աղջկայ հետ ծունկ

վերջապէս վճռեց կատարել Բերլինի դաշնա-գիրը, այնքան ինչքան այդ այդ գործը իրա-նից կախումն ունի: Ուշացնել այլ ևս անկա-րելն էր. եւրոպական կարենտները սպառ-նում էին, դեպատնաւները իրանց պահանջ-ները անդադար ներկայացնում էին թիրքաց կառավարութեանը, իսկ եւրոպական մասնա-ժողովները լցրին Կ. Պոլսի Այն մասնաժողով-ներին, որոնք պէտք է քննէին Բօզոպեան սարերի ապստամբութեան, Սերբիայի և Չէրնո-գորիայի սահմանների, Բօլշարիայի և Բուռն-լիայի գործերը, սկսեց իր աշխատանքը միայն Բուռնլիայի գործը քննող մասնաժողովը: Այդ մասնաժողովը ամբողջապէս հաւաքվեց մեծ վեղերի մօտ և թէպէտ ռուսաց գործակալները պահանջում են, որ մասնաժողովը նկատելին չը մասնակցէ թիրքաց գործակալը, բայց այդ հանգամանքը չէ կարող արգելք լինել մասնա-ժողովի պարագմունքներին, որովհետեւ այդ կէտում եւրոպական միւս պետութիւնները համաձայն չեն Ռուսաստանի հետ: Բուռնլիայի Բօլշարները չեն համարում մասնաժողովի աշխատանքներին: Նոքա չին կարող համի-րել որ նրանց հիւսիսային Բօլշարիայից բաժանեցին և մտադիր են ամեն միջոցներով ընդդիմանալ կոնգրեսի վճիռների իրագործ-մանը: Նոքա կազմակերպվում և զինաւոր-վում են: Ազգաբնակութեան այսպիսի տրա-մադրութիւնը մասնաժողովը համար անկաս-կած միջթաղ չէ և սպառնում է նրա հա-մար աւելորդ դժուարութիւններ ստեղծել: Պարզ երևում է, որ Բերլինի դաշնագրի այս բաժնի իրագործելը այնքան հեշտ չէ, ինչ-պէս երեւակայում էին սնդիկական լիազօր-ները:

«Չէրնոգորիայի և Սերբիայի գործերը գրե-թէ մի և նոյն դրութեան մէջ են: Եւրոպական գործակալները, որոնց յանձնած է այդ պե-տութիւնների սահմանների որոշելը նոյնպէս հասել են Կ. Պոլսի և սպասում են թիրք-բաց գործակալներին նշանակած տեղը ուղե-ւորվելու համար: Մահմէդ-Ալի-փաշայի սպա-նութիւնը բաւական վախեցնում է այդ գոր-ծակալներին: Չէրնոգորիայի և Սերբիայի սահ-մանները այժմ ինչպէս երևում է, կառավար-վում է ոչ թէ Բ. Դունից, այլ «Ալբանեան ընկերութեան» և երեւի մասնաժողովի վճիռ-ներին այստեղ ոչ ոք չէ հպատակվի: Ուրեմն գործերի դրութիւնը այստեղ էլ վատ է, մա-նաւորը եթէ ի նկատի առնենք, որ շահ ունեցող կողմերը անհամբերութիւն են ցոյց տալիս: Այս դեպքում էլ դժուար է իրա-գործել Բերլինի դաշնագիրը:

«Չեմ խօսում Բօզոպեան մասնաժողովի մա-սին: Նրա ողորմելի գործունեութիւնը ամեն-քին յայտնի է: Նա ոչինչ չը կարողացաւ:

չոքած, վերջինի տաք շնչառութիւնը զգալով, մա-ռանում էր աղօթքը և ուշաթափ ընկնում էր աղջկայ գրկը:

Նկատելով, որ փորձանքին ընդդիմանալու ան-կարելի էր, ճգնաւորը վճռեց հեռանալ հրա-պուրիչ օրիորդից, բայց այդպիսի քալ անելուց առաջ նա կամեցաւ խորհրդակցել իր դրացի ճգնաւորի հետ: Կեր ի հարկէ համոզեց միայ-նակեացին չիրագործել իր մտադրութիւնը և մնալ աղջկայ մօտ, որովհետեւ մարդ այն ժամա-նակ միայն արժանանում է եղեմական դրախտին երբ յաղթում է փորձանքներին և իր ցանկու-թիւններին: Ճգնաւորը վերադարձաւ իր խուրը որտեղ գտաւ կոմսի աղջկան: Կեր հրամանով այդ օրը աղջկին աւելի հրապուրիչ էր: Նա յանդիմանում էր ճգնաւորին իրան երկար ժա-մանակ միայնակ թողնելու համար, մօտենում էր նրան, գրկում էր և երկուսի շնչառութիւնները խառնվում էին: Ճգնաւորը մեղադրեց և այրից դուրս գալով խնկազարի նման սկսեց այս և այն կողմը վազել:

(Կը շարունակվի)

անել ապստամբներին հանգստացնելու համար։
«Մեծամեծ է յուսաց դործերը քննելու հա-
մար մասնագործը նշանակելու։ Յունաստանը
դրա համար շատ է աշխատում, իսկ Բ.
Դուռը արգելքներ է դնում։ Այստեղ ևս Բեր-
լինի գաղափարը դժուարութիւնների է հան-
դիպում։

«Եթէ եւրոպական թիւրքերը անցնեն ա-
սիականը, այնտեղ էլ նոյն բանը կը տեսնենք։
Այստեղի համար կոնգրէսը վերանորոգու-
թիւններ պահանջեց և յայտնեց, որ բոլոր
պետութիւնները կը հսկեն, որ Բ. Դուռը ան-
յայտալ գործ դնէ հարկաւոր միջոցներ չա-
յտատանի մէջ։ Բ. Դուռը մինչև այժմ ոչինչ
կարգադրութիւն չէ արել և որդրմէն հա-
յերին կողմնակալ և սպանում են թէ
թիւրքերը և թէ քրիստոնէի։ Իզուր հայերի
պատրիարքը, հիմնով կոնգրէսի վճիռների
վրա, յուսահատված դիմում է եւրոպական
բոլոր պետութիւններին, իզուր բոլոր դես-
պաններին հրաման է տուած պաշտպանել
հայերին Բ. Դուռն առաջ։ Իզուր դեսպան-
ների թարգմանները մէկը միւսին յետոյ այ-
ցելում են մեծ վեցելին, եպիսկոպոսները
մէկը միւսին յետոյ հեռագրներ են ուղար-
կում նրան, իզուր ինքն պ. Լայարդը, հիմն-
վելով յունիսի 4-ի գաղափարութեան վրա,
խիստ պահանջներ է ներկայացնում և սպառ-
նալքներ է դիմում։ Ոչինչ չէ օգնում և
արիւնը հեղեղել նման վազում է Մուշի, Վանի
և Երզրումի մէջ։ Դարձեալ մի անաջորդ-
թիւն Բերլինի գաղափարի համար։

«Ուստաց կառավարութիւնը կատարեց իր
պարտաւորութիւնը, նա դատարկեց գրաւած
թիւրքաց երկիրները։ Ուրեմն Անգլիան բա-
ւականութիւն ստացաւ։ Բայց այս դէպքում
երևում է եւրոպական պետութիւնների կա-
տարեալ կորուսթիւնը։ Դրանով կամենում
էին թիւրքերին միջոց տալ ազատ շունչ
քաշել և կենսք ստանալ, մինչդեռ նրան
մահվան հարուած հասցրին։ Հենց որ ուս-
տաց զօրքերը հեռացան Կ. Պոլսից և դատար-
կեցին Երզրումի վեցելիք անկարգութիւննե-
րը դարձաւ սկսվեցան։ Վերևը յիշեցի, թէ
ինչքն է պատահում հայաստանի մէջ, մի և
նոյնը կատարվում է Կ. Պոլսի մօտ։ Հենց որ
գնեւրալ Տօպլեբեկի զօրքերը անցան Չատալ-
չայի գիծը, թիւրքերը յարձակվեցան յոյ-
ների վրա, սկսեցին նրանց կողոպտել և ջար-
դել։ Դեռերալ Սկոբելով ստիպված էր վերա-
դառնալ Կ. Պոլս և առաջարկել Բ. Դրան
միջոցներ գործածել այդ չարքի առաջն
առնելու համար։ Ահա այսպէս է գործերի
այժման դրութիւնը։»

Մի և նոյն լրագրի թղթակիցը գրում է հե-
տևեալը Կ. Պոլսից։

«Սեպտեմբերի 23-ին Աֆգանիստանի է-
միրի դեսպանը ներկայացաւ սուլթանին։ Սուլ-
թանին ներկայանալուց առաջ նա այցելեց
մեծ վեցելին և շէյխու-լ-իսլամին։ Էմիրի դես-
պանը յարգանքով երեսի վրա ընկաւ սուլ-
թանի առաջ և յանձնեց նրան իր տիրոջ
նամակը։ Նամակի մէջ էմիրը գրում է, որ
նա 1877 թվականին, երբ ստացաւ սուլ-
թանի նամակը, պատրաստվեց թիւրքերին
օգնութիւն հասցնելու, բայց չը կարողացաւ
իր դիտաւորութիւնը իրագործել, որովհետեւ
նրան անգլիացիները խանգարեցին։ Անգլիա-
ցիները վստահում էին ընդհանուր ապստամ-
բութենից և այդ պատճառով զօրքեր կեն-
տրոնացրին Աֆգանիստանի սահմանների վրա։
Այժմ երբ սուլթանը խաղաղութիւն է հաս-
տատել Ռուսաստանի հետ, էմիրը վճռել է
վրէժխնդիր լինել անգլիացիներին։ Նամակի
վերջում էմիրը գրում է, որ կը սպասէ սուլ-
թանի հրահանգներին և որ իսլամի աղա-
տութիւնը նա տեսնում է բոլոր մահմետա-
կանների միութեան մէջ։ Տեսակցութեան
վերջը դեսպանը յանձնեց սուլթանին էմիրի
հարուստ ընծաները։

«Թիւրքաց դեսպանութիւնը շուտով կուղե-
ւորվի Աֆգանիստան և այնտեղ կը միանայ
նախկին դեսպան Սայիդ-Բաշի-բէյի հետ, որը
ծպտեալ հազուադէպ անցել է Պարսկաստա-
նից։

«Քաղաքական հոգսերը չարքեղցին մահ-
մետականներին սովորական հանգիստով տօնել
քաղիւր-հեջեցի կամ քաղիւր գիշեր» իսլամի
պաշտած եօթ գիշերներից մէկը։ Ընդհանուր
կարծիքի համեմատ այդ գիշերը կատարվում
են գաղտնի և անտեսանելի հրաշքներ։ Մինչև
անգամ անշունչ առարկաները երկրպագու-
թիւն են տալիս Ալլահին։

«Սուլթան Աբդուլ-Համիդ սովորութեան
համեմատ այդ գիշերը փայլուն սվետայի և
մի քանի սիրելի կանանց հետ գնաց Այա-
Սօֆիա մզկիթը աղթելու։ Մզկիթից սուլ-
թանը ուղևորվեցաւ պալատը, որտեղ նրան
նոր հանգէս էր սպասում, որովհետեւ քաղիւր
գիշերը» նոյնպէս նշանակում գիշեր է։ Այդ
երկուցին սուլթանը մի նոր գեղեցկուհի ըն-
ծայ է ստանում։ Հարեմի գեղեցկուհիները
չքեղ հագնված այդ օրվայ հանդիսի համար
հաւաքվում են մի մեծ դահլիճի մէջ։ Նրա-
ժողովութիւնը ածում է մինչև նոր գեղեցկու-
հու գալը։ Պալատի բոլոր դռն գոնեք փակ-
վում են։ Պահպանները մօտեցողին իրաւունք
ունեն հրացանազարկ անել։

«Վերջապէս մօտենում է գաղտնի ժամը։
Հարսը մտնում է դահլիճը և անցնում է միւս
սենեակը։ Անցնելու ժամանակ սուլթանը
բարձրացնում է վարդը և հայեացք է
ձգում գեղեցկուհու վրա։ Հարեան սենեակում
հազցնում են հարսին, նրա վրա անուշահոտ
ջրեր են ածում և յետոյ յանձնում են սուլ-
թանին։ Թնդանօթները ձայնը լուր է տալիս
մահմետականներին, որ գաղտնի հանդէսը
կատարված է։ Այս տարի տօնը այնքան
չքեղ չը կատարվեցաւ, որովհետեւ թիւր-
քիւն դժբաղդ դրութեան մէջ է։»

ԿՕՁԱՆԳԱՂԻ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Վիենայի «Politische Correspondenz»
լրագրին սեպտեմբերի 16-ից գրում են հե-
տևեալը։ «Կոնստանդնուպոլսի թիւրք ա-
ւելի սպառնալից կերպարանք ունի, քան թէ
Սիրիայի վալին կարող էր այդ բանը նախա-
տեսել։ Առաջին տեղեկութիւնները ստանա-
լով, կարծութեան համար Կոնստանդնուպոլս
իշխանութիւնների մէջ, որոնք տարածվում
են համարեա մինչև Ալեքսի դռները, մեր
վալին հեռագրեց մեծ վեցելին, որ նա, լրա-
գրական չափազանց մեծացած լուրերից
խորշելու համար, յարգանքով պատիւ ունի
տեղեկացնել այն փառքի իստիփութեան մա-
սին, որ յուզել է անաստուած Ահմէդ-փաշա
Կոնստանդնուպոլս և որը շուտով կը ճնշվի։ Նա
երկու բառալիքն զօրք բաւական է համա-
րում խռովարարներին խելքի բերելու համար։
Բ. Դուռը կատարելապէս հաստատով իր
պաշտօնականին, հրամայեց իր անընդունա-
կութեամբ և անհոգութեամբ յայտնի Ծ-դ
զօրաբաժնի ղեկավար Իզմէտ-փաշային, տալ
վալին պահանջած երկու բառալիքները, և
բացի դրանից կէս բառալիքն էս։ Բայց երբ
այս զօրքերը առաջ գնացին դէպի ապստամ-
բութեան գլխավոր կենտրոնը, Սիւս, նրանք
շատ շուտով հանդիպեցան ապստամբների
գերագնաց ուժերին, այնպէս որ առաջ գնալ
բոլորովին անկարելի էր մտածել և զօրքերը
ուրախ էին մի կերպով աղաղակել վտանգից։
Ապստամբները գերեցին 120 զինուորներ և
տարան Այա։ Այս փառաւոր արշաւանքի ժա-
մանակ մի տեղը մէկ թնդանօթ ևս կորաւ։
Այն ժամանակ միայն, թէ այստեղ և թէ
Կ. Պոլսում, սկսեցին իրանց արած սխալը
խոստովանել, որ չը հասկացան հակառակորդի
ոյժը, և ամեն միջոցներ գործ դրեցին, նշա-

նաւոր ոյժեր պատրաստելու համար։ Այդ-
սանդը հասան 4 բառալիքներ, թիւր-
քանօթներով և Սիրիայի վեցելիքում 6 թա-
ւոր զօրք հաւաքեցին։ Իզմէտ-փաշան հրա-
ման ստացաւ այդ փառքի զօրաբաժնի ղեկին
անցնել և շուտով եռանդուն կերպով սկսել
արշաւանքը։ Այնու ամենայնիւ յեղափոխ-
կան շարժման ճնշումը դժուար թէ շուտ
ժամանակում իրագործվի։ Ահմէդ-փաշան մեծ
ազդեցութիւն ունի կոնստանդնուպոլս և
հայերի վրա, նրանք սիրով հետևում են իրանց
հին իշխող ցեղի սերունդին։ Կոնստ. զօր-
քերը երկար ժամանակ, այսպէս ասած, անկար
թաղաւորում էր այս տեղերում, ճանաչելով
սուլթանի ծայրագոյն իրաւունքները Կոնս-
տանդնուպոլս Բայց թիւրքաց քաղաքականու-
թեան յայտնի հրաշքերը աւելի և աւելի սահ-
մանափակեցին երկրի ինքնավարութիւնը մին-
չև այն ժամանակ, երբ Կոնստ. զօր. տան վեր-
ջին ներկայացուցիչ Ահմէդ-փաշան բանտար-
կեցաւ և Կ. Պոլսի գերի տարվեցաւ ուր կառա-
վարութիւնը թողալ էր տալիս նրան։ Ահմէդ-
փաշան իր բանտարկութեան ժամանակ ցաւօք
սրտի տեսաւ որ Կոնստ. ինքնավարութեան
վերջը հասաւ և որ Բ. Դրան պաշտօնեաները
իրանց սովորական ձևով են վարվում այնտեղ։
Առողջութիւնը կազդուրելու համար օգտու-
խու թիւրք պատճառ բերելով Ահմէդ-փաշան,
մի քանի շաբաթ առաջ, հրաման ինդրեց
Կոնստ. գնալ։ Նա իսկապէս այնտեղ ուղևոր-
վեցաւ, բայց շատ շուտով անհետացաւ և
յանկարծ իր կուսակիցների փառքի խմբով
Կոնստանդնուպոլս երևեցաւ։ Համենով այնտեղ,
իսկոյն հաւաքեց նա իր կուսակիցներին, և
հեռագրով տեղեկութիւն տուեց ինչպէս Բ.
Դրան նոյնպէս Ալեքսի վալի Զիա-փաշային այն
բանի մասին, որ ինքն բոլորովին միտք չունի
ապստամբել սուլթանի իշխանութեան դէմ,
բայց յայտնում է իր իրաւունքները Կոնս-
տանդնուպոլսի վրա։ Բ. Դրան, ինչպէս նախկին
ժամանակներում, հարկերը
կը վճարվին և զօրք կը արկին Սթէ կառա-
վարութիւնը այս առաջարկութիւնը կըն-
դունէ, այն ժամանակ ամեն բան խաղաղ և
լաւ կերթայ, հակառակ դէպքում, ինքն կը
կարողանայ զենքը ձեռքին պաշտպանել իր
հայրենի երկրի ինքնավարութիւնը։ Բայց որով-
հետեւ Բ. Դուռը չը հաւանեց այս նախա-
գիծը, և ամեն տեսակ միջոցներ ընդունեց
Ահմէդ-փաշային, որպէս խռովարարին, նուա-
ճել նա հարկաւոր համարեց յարձակողա-
կան դիրք ընդունել և սկսեց այն բանից, որ
տիրեց նահանգի գլխավոր քաղաքը, Սիւս, և
Բ. Դրան պաշտօնեաներին այնտեղից արտա-
քեց։ Քանի որ Ահմէդ-փաշան կառավա-
րում է սուլթանի անունով, որի ծայրագոյն
իրաւունքները ինքն այնպէս հանդիսաւոր
կերպով ճանաչեց, Սիւս և լեւանդում գտնված
բոլոր տեղերը ամրացնում է ինչպէս հարկա-
ւորն է, և ինքն մեծ և խելացի եռանդ է
ցոյց տալիս Իզմէտ-փաշան իր զօրքերով ա-
ջորդութեան վրա աւելի քիչ կարող է յուսալ
այն պատճառով, որ բացի հակառակորդի
ուժերից, իր սեփական թուլութիւնը կը
ստիպի նրան դեռ ևս պաշտպանողական դիր-
քի մէջ մնալ։ Բայց դրանից, նրա բանակում
մօտ 40% հիւանդ զինուորներ են գտն-
վում։ Կ. Պոլսի ուղարկված բառալիքները
արդէն Ահմէտանդը հասան, որոնք շատ
նուազվել էին ջրմուխ։ Անսովոր կլիման չէ
կարող առողջապահական պայմանները լա-
ւացնել, և այս պատճառով գէշը կընել ըն-
դունակները օրից օր պակասում են։»

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

— Անգլիական լրագիրները հաղորդում են, որ
հէյբերեան ցեղերը աֆգանիստանցիների դէմ
են, իսկ մօմենդները նրանց օգնելու են։

— Լրագիրներին հաղորդում են, որ Բ. Դրան
և Անգլիայի մէջ եղած բանակցութիւնները փոքր-
Ասիայի վերանորոգութիւնների մասին լաւ ըն-
թացք են ստանում։ «Բէյութի ընկերութեանը»
Կ. Պոլսից հեռագրում են, որ սուլթանը խոս-
տացաւ ընդունել վերանորոգութիւնների նա-
խագիծը։ Խօսում են, որ սուլթանը մի նամակ
գրեց անգլիական թագուհի Ալիկտորիային, որի
մէջ խոստանում է Ասիայում մտցնել Անգլիայի
առաջարկած վերանորոգութիւնները։

— «Standard» լրագրին Հնդկաստանից հա-
ղորդում են հետևեալ տեղեկութիւնները։ «Հնդգ-
կաստանի և Աֆգանիստանի մէջ պատերազմա-
կան գործողութիւնները կարող են ամեն րօպէ
սկսվել։ Ասում են, որ Աֆգանիստանի զօրքերի
չորս գունդեր և վեց թնդանօթներ հասան Ալի-
մուսվիդ։ Զամրուդի մէջ գտնվում են Հնդկաս-
տանի զօրքերը։ Աֆգանիստանի միւս զօրաբա-
ժնիները առաջ են գնում և սպանում են պատ-
ժել հէյբերեան ցեղերին։ Նրա համար, որ յոգա
թոյլ տուին անգլիական դեսպանութեանը անց-
նել իրանց երկրից։ Այդ հանգամանքը կը ստի-
պէ հէյբերեան և միւս ցեղերին անցնել անգ-
լիացիների կողմը և կարծում են, որ նրանք այդ
ցեղերին օգնութիւն կը հասցնեն։ Աֆգանիս-
տանի զօրքերը Ալիմուսվիդից վերցրած թնդա-
նօթներով պաշտպանում են լեւանային մի քանի
անցքեր։ Մեր տեղացի դեսպանը դեռ չէ վե-
րադարձել։ Կարծում են, որ նրա հետ կը գալ
էմիրի հաւատարմագրերը։»

— «National Ztg.» լրագիրը հաղորդում է, որ
ուստաց զօրքերը բոլորովին դատարկել են Կ. Պոլ-
սի շրջակայները, բացի Դեղեկ-Աղաչ նաւահանգս-
տից, որ բունդեան երկաթուղու ճիւղերից մէկի
մօտ է գտնվում։

— Լրագիրները հաղորդում են, որ բոլորա-
կան սկուպինան կը հաւաքվի հակառակորդ ըն-
թացքում։ Բոլորական իշխանութեան տարե-
կան ծախսը 16 միլիոն ֆրանկ է նշանակած։
Իշխանութիւնը Բէյութից և Բուխարես-
տում զիպլոմատիական հաւատարմագրեր
կունենայ։

ՄԵՇԱԿԻ ՀՅՈՒՍԵՒՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՐ, 6 հոկտեմբերի «Голосъ»
լրագրին հաղորդում են Կ. Պոլսից, որ թիւր-
քաց զօրքերի չորս բարձրաստիճան օֆիցեր-
ներ Փրանսիական վերջին Meandre շաքե-
նաւով Կ. Պոլսից ուղևորվեցան դէպի Տրա-
պիզոն։ Նորա գնում են Կարու իրանց ծա-
ռայութիւնը էմիր Եիր-Ալին առաջարկե-
լու, եթէ Աֆգանիստանի և Անգլիայի մէջ
պատերազմը ծագէ։ Օֆիցերներից մէկը
թնդանօթաձիգ Ալի-բէյն է, որ կը թու-
թիւն է ստացել Սէն-Ջէմսի և Վուլֆելի
զինուորական ուսումնարաններում։ Կարծում
են, որ սերասկերիտը այդ օֆիցերներին ու-
ղարկել է Աֆգանիստան էմիրի խնդրեքի հա-
մեմատ։

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՐ, 6 հոկտեմբերի Երէկ
հասաւ այստեղ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկո-
լայի վեջը։

Կ. ՊՕԼԻՍ, 4/16 հոկտեմբերի Սալոնիկի
միտրոպոլիտ Յովակիմ, որ յայտնի է իր
հակաուսական ուղղութեամբ, այսօր ընտր-
ված է ընդհանրական պատրիարք Յովակիմ
III-ի անունով։ Ռուսաստանից վերադարձող
գերիները չեն արձակվում։ Նկող տարվայ
ընդհանուր զինուորագրութիւնը անպապ
կը կատարվի։

ԼՕՆԻՍ, 5/17 հոկտեմբերի Աֆգանիստանի
հետ պատերազմը անփախելի է համար-
վում։ Կարելի է սպասել անպապ յարձակ-
ման Կանդահարի վրա։

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՐ, 6 հոկտեմբերի Պետա-
կան բանկի 5% տոմսից առաջին շրջանի
արժէ 96 ր. 75 փ., երկրորդ 95 ր. 50 փ., եր-
րորդ 95 ր. 50 փ., չորրորդ 95 ր. 50 փ.,
ներքին 5% առաջին փոխառութեան տու-
տակ արժէ 233 ր. 50 փ., երկրորդ 229 ր.
75 փ., արեւելեան 92 ր. 50 փ., ոսկի 8 ր.
19 փ.։ Ռուսաց 1 րուբլ Լօնդոնի վրա արժէ
24 1/32 պէնս։ Դիսկոնտ 4/5։ Տրամադրութիւնը
ամուր է։

